



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ 20-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Չորեքշաբթի, 21 Սեպտեմբերը Հայաստանի Հանրապետության վերանկախացման 20-րդ տարեդարձն էր:

Կիրակի, 25 Սեպտեմբերին, Հայաստանի Հանրապետության վերանկախացման 20-ամեակին առթիւ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Հանրապետական Մաղթանք պիտի կատարուի, եւ Առաջնորդ Սրբազան Հօր խօսքը պիտի ընթերցուի, հայցելով Աստուծոյ օրհնութիւնը, որպէսզի վերանկախացեալ մեր հայրենիքը ըլլայ բարգաւաճ, ազատ, եւ իր ժողովուրդը՝ երջանիկ ու անվտանգ:

Կոչ կ'ուղղենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ Ս. Պատարագին եւ Հանրապետական Մաղթանքին մասնակից եւ աղօթակից ըլլալով՝ Երկնաւոր Հօրմէն հայցէ մեր հայրենիքին անսասանութիւն, հոգեւոր ու ազգային կեանքի վերածաղկում, բարօր եւ շինարար կեանք ու պայծառ սպազայ:

### PRAYERS FOR REPUBLIC TO BE OFFERED IN ALL PRELACY CHURCHES

Wednesday, September 21<sup>st</sup>, 2011 was the 20<sup>th</sup> anniversary of an independent Armenian Republic.

On this occasion, by the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, on Sunday, September 25, Prayers for the Republic will be offered in all Prelacy Churches and the Prelate's message will be read.

We invite our faithful to attend Divine Liturgy and join in prayers for our homeland.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆՉՆՈՒՄԻ 20-ԱՄԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ

Այս շաբաթավերջին Լոս Անճելըս պիտի ժամանէ Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք նախագահ Տիար Սերժ Սարգիսեան, հովանաւորելու Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 20-ամեակին առիթով կազմակերպուած շարք մը նախաձեռնութիւններու եւ ձեռնարկներու:

Կիրակի, 25 Սեպտեմբերին, առաւօտեան ժամը 10:30-ին, Պըրպէնքի Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ Ս. Պատարագ պիտի մատուցուի:

Ս. Պատարագին ներկայ պիտի ըլլայ Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք նախագահը Տիար Սերժ Սարգիսեան եւ իր շքախումբը: Ս. Պատարագի աւարտին պիտի կատարուի նաեւ Հանրապետական Մաղթանք:

Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ Ս. Պատարագին եւ իր մասնակցութիւնը պիտի բերէ արարողութեան: Առաջնորդ Սրբազան Հօր պիտի ընկերանան Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Աւելի ուշ, կ.ե. ժամը 1:30-ին, տեղի պիտի ունենայ ՀՀ Գլխաւոր Հիւպատոսութեան նոր շէնքի բացման եւ ՀՀ դրոշի բարձրացման պաշտօնական արարողութիւնը, Կլենտէյլի մէջ:

Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի մասնակցի արարողութեան:

Իսկ երեկոյեան ժամը 5:30-ին, Beverly Hilton պանդոկին մէջ, տեղի պիտի ունենայ ՀՀ Անկախութեան 20-ամեակին նուիրուած ճաշկերոյթը, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ ՀՀ Նախագահին:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ ճաշկերոյթին, եւ իր շնորհաւորութիւններն ու բարեմաղութիւնները պիտի փոխանցէ:

## CELEBRATING THE 20<sup>TH</sup> ANNIVERSARY OF ARMENIAN INDEPENDENCE

This weekend, the President of Armenia His Excellency Serzh Sargsyan will arrive in Los Angeles to celebrate with the community the 20<sup>th</sup> anniversary of an independent Armenia.

On Sunday, September 25, the President, joined by high ranking officials from the Republic of Armenia, will attend Divine Liturgy at St. Leon Cathedral in Burbank. Special prayers for the Republic will be offered at the conclusion of Divine Liturgy.

The Prelate will participate in the service. He will be accompanied by Very Rev. Fr. Muron Aznikian and Very Rev. Fr. Barthev Gulumian.

In the afternoon, the Prelate will participate in the blessing and official opening of the new Consular headquarters in Glendale will take place, and in the raising of the Armenian flag ceremony.

In the evening, a banquet in celebration of the 20<sup>th</sup> anniversary of Armenian independence will be held at the Beverly Hilton under the auspices of President Sargsyan. The Prelate will attend and convey his blessings and well wishes.

\*\*\*

## «ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՏԱՐՈՒԱՆ» ԱՌԻԹՈՎ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆՂԱԿ ՄԱՐՄԻՆԻ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՁԵՆՆԱՐԿ



Ազգային  
Առաջնորդարանի Տիկնանց  
Օժանդակ Մարմինը  
Հինգշաբթի, 22  
Սեպտեմբերին,  
կազմակերպած էր «Հայ  
Մանուկի Տարուան»  
նուիրում իր  
ձեռնարկներն երրորդը, որ  
կը վայելեր Առաջնորդ  
Սրբազան Հոր

Նախագահութիւնը:

Ձեռնարկը տեղի ունեցաւ Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Զարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, կ.ա. ժամը 11էն սկսեալ:

Դասախօսելու հրաւիրուած էր մասնագետ մանկաբոյժ Տոքթ. Յովիկ Մելիտոնեան: Ան խօսեցաւ մանուկներու արտասովոր գիրութեան երեւոյթին, կանխարգիլման ու դարմանումի միջոցներուն մասին:

Բարի գալուստի խօսք արտասանեց Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամ՝ Տիկին Հուրիկ Ապտուլեան: Սեղաններու օրհնութիւնը կատարեցին Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեանն ու Արժ. Տ. Ղեւոնդ Քինյ. Քիրազեան: Աւելի ուշ, բեմ հրաւիրուեցաւ օրուան դասախօս բժիշկը, որ ներկայացուց իր նիւթը:

Ապա Առաջնորդ Սրբազան Հոր օրհնութեան խօսքով եւ աղօթքով, ձեռնարկը հասաւ իր աւարտին:

## "YEAR OF THE ARMENIAN CHILD" THIRD LITERARY LUNCHEON HELD AT THE PRELACY

In celebration of the "Year of the Armenian Child" proclaimed by H.H. Catholicos Aram I, the Prelacy Ladies Auxiliary has this year organized a series of literary luncheons under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.



The third in the series was held on Thursday, September 22<sup>nd</sup>, at 11:00 a.m., at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.

After the guests enjoyed lunch, Ladies Auxiliary member Mrs. Hourig Abdulian welcomed the guests and invited Very

Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Fr. Ghevont Kirazian for the blessing of tables and the invocation.

Keynote speaker Dr. Hovig Melidonian was then invited to present his lecture on childhood obesity.

The event closed with the Prelate's blessings and benediction.

\*\*\*